# ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

Էլ. Հասցե՝ karavaruminfo@gmail.com Հեռախոս 8017

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

**Պրն. ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ-ին**

Հարգելի պարոն՝ Խուդաթյան,

«Արտակարգ իրավիճակների ճգնաժամային կառավարման կենտրոն» ՓԲԸ գործունեությունը ներառում է տնտեսվարողներին արտակարգ և/կամ ճգնաժամային իրավիճակներից զերծ պահելու, ժամանակին և պատշաճ կարգով օրենսդրությամբ սահմանված անվտանգային կանոնները պահպանելու մասով՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի «Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 595-Ն հրամանի պահանջներին համապատասխան ծառայությունների մատուցումը, մասնավորապես

*Ոչ մեթան տեսակի գազով շահագործվող սարքավորումների մասով*

«Արտակարգ իրավիճակների ճգնաժամային կառավարման կենտրոնն իրականացնում է (ոչ մեթան տեսակի գազով շահագործվող) ծխաօդատար ուղիների, ծխնելույզների մաքրում՝ որի վերաբերյալ տրամադրվում է համապատասխան արձանագրություն /ակտ/ համաձայն օրիինակելի Ձևի:

*Գազով շահագործվող վառարանների մասով*

Ընկերությունն իրականացնում է գազով շահագործվող ծխատար և օդատար ուղիների պիտանելիության ստուգում և համապատասխան ակտի տրամադրում՝ համաձայն ՀՀ կառավարության «Գազաբաշխման համակարգի անվտանգության և շահագործման կանոնները հաստատելու մասին» N 539-Ն որոշման գլուխ 1-ի 6-րդ և 8-րդ կետերի, ինչպես նաև 25-րդ գլխի «Գազ սպառող բաժանորդների գազի սարքավորումների անվտանգությունը և շահագործումը» բաժնի 728-րդ կետերի դրույթների:

«Արտակարգ իրավիճակների ճգնաժամային կառավարման կենտրոն»-ը իրականացնելով վերը նշված աշխատանքները նպատակ է հետապնդում նաև Հասարակական նշանակության և բնակչության կենսաապահովման և անվտանգության նորմերի պահպանման նկատառումներից ելնելով խթանել նաև տնտեսվարողներին զերծ պահելու ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված հնարավոր պատասխանատվությունից:

Առաջնային ուշադրության առժանի և պետական վերահսկողության ներքո գտնվող հիմնարկների շրջանակներում նշված աշխատանքների բովանդակության ու անհրաժեշտության մասին իրազեկելու համար խնդրում ենք ծանուցման (Malbery) էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով շրջաբերական գրությամբ ծանուցել այդ մասին՝

Երևանի քաղաքապետարանին, Երևանի քաղաքապետարանի վերահսկողության տակ գտնվող մանկապարտեզներին, դպրոցներին, ՀՈԱԿ-ներին, ինչպես նաև ՀՀ բոլոր մարզպետարաններին և ՏԿԵ նախարարության ենթակայությամբ գործող համապատասխան ՊՈԱԿ-ներին։

Առաջարկվող աշխատանքներն իրականացվելու են բոլոր պետական ենթակառուցվածքների շրջանակներում, որը պետական ու հանրային շահերից ելնելով՝ պետական բյուջեի խնայողության հաշվին իրականացվելու է անհամեմատ մատչելի պայմաններով ։

Հարգանքներով՝

«Արտակարգ իրավիճակների ճգնաժամային կառավարման կենտրոն»

Տնօրեն

Թագուհի Հակոբյան

Թեժ գիծ 8017 / / Կ.Տ

: